

ՍՍՐԴԱՐԱՊԱՏԻ ԳԱԽԱՌԱԿ

Ով գոնէ մի տարի առանց դուրս գալու եղել է Երևանում, նա կիմանայ, թէ ի՞նչ ուրախութիւնով մարդ շտապում է օր առաջ դուրս գալու այդ կաթսայից և ազատ օդ շնչելու: Ամառ ժամանակ Երևանցիներ, եթէ քաղաքից դուրս է գալիս, անպատճառ իրան քցում է Գարաշիշաք, Երևանի այդ պաշտօնական ամարանոցը: Ես մտածեցի՝ բոլորը գնում են այն կողմը, ես կգնամ տաք դաշտային կողմը, յառկապէս Սարգարապատի գաւառակը, որին որպէս ծննդավայրի, անվնաս և անպատիժ կերպով, թէկուզ յուլիսեան տօթերին, կարող էի այցելել: Երևանից այդ գաւառակը դնալու համար երկու ճանապարհ կայ. 1) Երկաթուղիով-Ղարխունով և 2) շօռէյով-Վաղարշապատով: Առաջինը՝ համ արժան է. համ էլ գները որոշ և ժամանակի խնայողութիւն ունի, երկրորդը՝ թանդ, կառքերի գները փոխիսական և ժամանակի վատնումն: Որոշեցի առաջին ճանապարհով գնալ, բայց ուշացայ դնացքին, ստիպուած եղայ Վաղարշապատով գնալ: Ժամի 12-ին յուլիսի 28-ին դուրս եկայ Երևանից, Վաղարշապատում հանգիստ առնելու կարիք չկար: Մտածեցի՝ սառը քանքանի մօտ ձիերը ջուր կիմեն, մենք էլ կհանգստանանք: Այդ ցնորքն էլ չյաջողուեց: Ելեկտրական մեքենաներով՝ ճիշտ է, վանքի բակից թէև աւելի ջուր դուրս գալիս է, բայց սառը քանքանի հաշուին, որը չորացել, կամ աւելի լաւ ասած, ճահճացել, մամռակալել էր: Խրիմեան Հայրիկի ժամանակից մնացած լճակը, ուր սառը ջուրը ամառը հաւաքուելով, մեծ կենդանութիւն էր տալիս կալուորների անասուններին՝ այժմ ճահճ է, թէև էլի կալուոր կայ, հօտադները իրանց տաւարներով կան, բայց փոխանակ վճիտ, սառը ջրի՝ մամռակալած կոյաջրի մէջ են լող տալիս: Թողնք Վաղարշապատի սառը քանքանի այդ բաւականութիւնն էլ, անցանք դէպի առաջ: Սարգարապատի գաւառակում իմ շրջագայութիւնը պէտք է սկսուէր Մարգարա գիւղից. իմ բախտից Երևանից սկսած մինչև այդ գիւղը թեթև քամին չգաղարից և թէև օրուայ ամենաշոգ ժամանակին էինք ճանապարհորդում, բայց չողից չէինք տանջւում: Ժամի 3-ին հասայ Մարգարա գիւղը, որ ընկնում է Սարգարապատի գաւառակի (այժմեան բաժանմունքով՝ Եջմիածնի գաւառի 3-րդ մասը, իսկ պատմական՝— Արմաւուրի դաշտ) մէջ:

Սարգարապատի գաւառակը 4 գալուստութեան կամ

շրջանի է բաժանուած. 1) Ղարխուենի, 2) Ղուրդուղուլի, 3) Սարգարապատի և 4) Շահրիարայ: Պախատինսկի դաւառապետը հաւանելով Սարգարա գիւղի ջուրն ու գիրքը առաջին գլանութեան կենտրոն ընտրել էր Մարգարա, ուր և մնում էր գատարանը, ըայց յետոյ տեղափոխուեց Ղարխուեն, խանի գիւղն ու տունը: Այդ գալաւայութեան մէջ թուրքերի համար յարմար էր Ղարխուենը, որովհետեւ թուրք գիւղերի կենտրոնն է. հայերի համար՝ Մարգարա. Սարգարապատի դաւառակի միւս հասարակութիւնները կենդրոնները հայ գիւղեր են: Ամբողջ գաւառակը ունի 37 գիւղ, որոնցից 15-ը հայաբնակ են, 15-ը թուրքաբնակ և 7-ը քրդաբնակ: Քիւրդ գիւղերը միայն ձմերոցներ են, որովհետեւ քնակիչները ամառը քոչում են լեռները: Հայ և թուրք գիւղերի թուերի հաւասարութիւնը քիչ նշանակութիւն ունի՝ հայ գիւղերը մեծ են: Ամբողջ գաւառակը ունի մօտաւորապէս 31,772 ազգաբնակչութիւն, որոնցից 19,400 հայ, իսկ 12,372-ը թուրք, քուրդ և այլն: Հայ ազգաբնակչութիւնը գաւառակի միջուկն է կազմում և միջին շերտումն էլ ընկածում է: Սարգարապատու գաւառակը հին Արագած դաշտի 3-րդ մասն է, ուր ծաղկեց մեր ազգը: Այդ դաշտերն կամ դաշտամասերն են. 1) Արաւշատ քաղաքի շրջակայքը. 2) Վաղարշապատի շրջակայքը և 3) Արմաւրի շրջակայքը: Այլ մեր ազգային պատմութեան ու քաղաքակրթութեան մասին գաղափար ունի, նա գիտէ, որ Արշակունեաց հարստութիւնը ծաղկեց, զարգացաւ և աւարտուեց Երասխի հովտի, նրա ձախ ամիւ այդ 3 մայրաքաղաքներում: Ղ. Փարպեցին Ե. դարում իրաւունք ունէր Արարատեան դաշտը, որի մէջ մտնում է Արագած, հիացմամբ նկարագրելու: Արտաշատի, Վաղարշապատի և Արմաւրի դաշտերի հիւսիսում բազմած են Արագած, Արայի և Գեղամայ ջրով լի, ծաղկաւէտ սարերը, որոնք ջրամբարներ և լեռնային լճերը կազմելով, բաց են թողնում խոնավութեան և ջրի անհատնելի պաշար իրանց ստորոտի վերայ գտնւող արեւակէզ դաշտերի համար: Սարգարապատու հեղեղատը, Ղուռարազը, Սև ջուրը, Քասախը, Զանգին (Հրազդանը), Գառնու կամ Աղատ դետը և Վէդի գետակը հոսում են այդ լեռներից դէպի Երասխի աւազանը: Ինչպէս Արտաշատու դաշտի (Գառնի-բառար), նոյնպէս Վաղարշապատի և Արմաւրի կլիման տեղ-տեղ ճահճային է, տեղ տեղ առապար, ըայց ուր ջուր է հասնում, բարեբեր է և արգաւանդ: Արգիւնաբերութեան գլխաւոր առարկաներն են ցորենը, բամբակը, քնջիթը, այգին, բոստանը: Արմաւրի դաշտում կամ Սարգարապատի գաւառակում կան հետեւեալ հայ գիւղերը:

1) Զերուխչի-45 տ. Ղուռու-Արագի և Զերուխչի ճահճուտների մէջ. գիւղը վատառողջ կլիմայ և ջուր ունի, ազգաբնակչութիւնը նուազում է: Զերուխչեցիք շնորհիւ հայազգի ջրաբաշխինժիներ Մանուչարեանի, այս տարի կարողացան Երասխից, մօտիկ տեղից, առու բանալ. և յուսալի է, որ այսուհետեւ բնակչութիւնը աճի և տնտեսութիւնը բարւոքուի, մանաւանդ որ հողն առատ է: Զերուխչին ունի մի գիւղական խարխուլ եկեղեցի և մի քահանայ. ուսումնարան չկայ: Գիւղացիք բուրրովին անճարա՞յ չեն:

2) Արտաշար (Փորը) 45 տ. Ղուռու-Արագի և Սև ջրի ճահճուտների միջև. գիւղը վատառողջ կլիմայ և ջուր ունի. ազգաբնակչութիւնը, նուազում է: Արտաշարը յայտնի է հիւնալի կարմրամիջ ձմերուկի բերքով, որ սակայն չի արտահանւում: Արտաշարցիք չունեն դէթ Զերուխչեցոց ձեռներէցութիւնը: Կայ խարխուլ եկեղեցի և մի քահանայ. ուսումնարան չունեն:

3) Մարգարա-175 տ. դառնում է Երասխի ձախ ափին. հիւսիսային կողմից Երասխին զուգընթաց ձգւում էր մի ճահճուտ (ղորի) որ այժմ բուրրովին գոյութիւն չունի: Երասխի կրկնակի վարարումները 1887 թ. և 1891 թ. աղմուկ բուրրովին լցրին այդ վերստերով տարածւող ճահճուտը և այն դարձաւ արօտատեղ, կալ և արտ մարգարեցոց համար: Երասխը երբ մի կողմից քանդում էր իւր ափերի պարարտ դաշտերը, միւս կողմից ճահճուտը լցնելով վարելահող էր դարձնում, միևնոյն ժամանակ բարելաւելով կլիման: 1887 թուին Երասխը քանդելով գիւղը, պատճառ դարձաւ կամուրջի մօտ, խճուղու վերայ, կանոնաւոր փողոցներով, նոր գիւղ հիմնել տնտեսիւնների հաւասար չափով: Գիւղը հիմնուել է 1810 թ. և իւր սկզբնական բնակչութեան օրով ունեցել է միայն 17 տուն, հիմնարկողն է Մշու գաւառից գաղթած ոմն Մարգար որի անունով կոչուել է գիւղն էլ: Ունի մի գիւղական եկեղեցի և մի քահանայ: Գիւղում կայ պետական մի դասեան դպրոց, որ սակայն ցանկալի արդիւնքներ չէ ցոյց տալիս: Կառավարութիւնը այդ դպրոցի համար բաց է թողնում 700 ը.: Ցանկալի կը լինէր, որ գիւղացիք տային բնակարան ուսումնարանին, իսկ վարժապետներն էլ պարտաճանաչութեամբ ուսումնարանը յառաջադիմութեան շաւղի մէջ դնէին և սիրելի դարձնէին ժողովրդի համար:

Այս գիւղի միջով անցնում է խճուղին դէպի Իգդիր, և Երասխի վերայ շինուած է երկաթեայ մեծ կամուրջ, որի մօտ ձախ կողմից պահպանութեան համար կան տնակ և ծառաներ,

խի աջ կողմում պահակատուն 7-8 ստրաֆնիկներով (հեծեալ պահակապաններ), դիւղում կայ և փոստի կայարան: Յարաքերութիւնը աւելի ևս կը դիւրանար եթէ այդ կայարանը նամակներ ընդունէր և տար: Մարդարան դառնում է վաղարշապատի և Իգդիրի մէջ, առաջինից 19 և երկրորդից 18 վերստ հեռաւորութեամբ, և օգտուած լինելով համեմատաբար լաւ օդ ու ջրով, ճանապարհային հաղորդակցութեան յարմարութիւններով, շրջակայ հայ և թուրք գիւղերի համար ամենայնարմար տեղն է բժշկական կայարան դառնալու, ուր մի բժիշկ, մի մանկաբարձ, մի ֆելդշեր և մի փոքրիկ դեղատուն ագիտութեան մէջ թաղուած գիւղական հասարակութիւնների համար ամենամեծ բարեքը կը լինէին:

4) Էվջիւար (Փոքրն)—110 տ. Մարդարի գիւղից դէպի արեւմուտք $1\frac{1}{2}$ վ. հեռաւորութեան վերայ Երասխի ափին: Աղգաբնակութիւնը ժիր է, բայց անուսումնասէր. սիրում են ինդրիկներ և անձնական հողի վերայ միմեանց վնասել: Գիւղն ունի կլիմայական յարմարութիւններ. գիւղի տեղը վատառողջ է, ջուրն էլ մաքուր, Երասխի ջուրն է: Թէև նոր է փոխուած Երասխի ափը (առաջուայ գիւղատեղը խիստ ճահճուտ էր) բայց կանոնաւոր փողոց և հաւասար անատեղեր չունեն (ինչպէս Մարդարան ունի): Էվջիւարում մէկը $\frac{1}{2}$ դեռեալին տնտեսող, բակ և բաղունի, միւսը բակ անգամ չունի: Էվջիւարը ունի մի գեղջկական եկեղեցի և 2 քահանայ. չկայ դպրոց: Էվջիւարոցոց դաշտերում դէպի արեւմուտք գտնվում են Ղաթրաբաթ և Սահաթլու փոքրիկ քրդաբնակ գիւղերը, որոնց քուրդ բնակիչները աշնանը լեռներից իրանց այդ ձմերոցները վերադառնալով՝ գիւղերները գողանում էին դաշտային բերքերը, յատկապէս բամբակ, խի ձմեռները՝ մարագներէից, որ տներից հեռու էին, խոտ, դարման: Որքան պակասում է քրդերի այդ վատ հակումն՝ այնքան նոյնը զօրանում է հայ գիւղացիների մէջ: Եւ այդ խի պատճառով խռովութիւնն ու վրիժառութիւնը սովորական բան է նրանց համար:

Իրանք Էվջիւարցիք բաջալերում են քրդերին, նրանց գողո՞ւքը պատրկելով և դաղտնապահները դառնալով:

5) Ուզուն—Օբա հայ գիւղը ունի 150 տ. կլիման վատառողջ է ճահճուտների մէջ, հողը շոռ է. խիստ շատ փշատի ծառեր կան: Գիւղը ինչպէս կար սրանից 20 տ. առաջ (երբ ես դեռ աշակերտ ժամանակ տեսել էի,) այժմ էլ նոյնն է, կուլտուրական ոչ մի առաջխաղացութիւն: Ունեն մի գիւղական եկեղեցի և 2 քահանայ: Ուսումնարան չունեն: Աւելացել է միայն մի երկյարկան քարաշէն տուն:

6) Արմթլու հայ և թուրք ազգաբնակիւթեամբ, որոնցից հայ 40 տ. իսկ թուրք 25 տուն: Հայերը ժիր են և աչքաբաց, բաժանուելով թուրքերից, ճանապարհի վերայ են հաստատուել և հասեմատաբար լաւացրել կլիմայական պայմանները, բայց ընդհանրապէս վատառողջ է Արմթլուի կլիման և ազգաբնակիւթիւնը չի աճում: Արմթլուի մօտով են անցնում Ղուռու-Արաղի ճահճուտները և այդտեղ ընդհանրապէս այդ ճահճուտների սկիզբն է համարում: Ուսումնարան չունեն: Ղուռու-Արաղի ձախ ափում դէպ արեւմտահիւսիս Արմթլուից գտնում է Ղուզիգիզան գիւղը Ղուզիգիզանից սկսած դէպի հիւսիս և արեւմտահիւսիս ձգուած գիւղերը կոչւում են վերի գիւղեր և տարբերւում են ցածի գիւղերից:

7) Ղուզիգիզան, 150 տ., երեւում է գիւղում մաքրութիւն, գիւղի մէջ տեղում ճանապարհի վերայ ընդարձակ և բաւակաւնին մաքուր հրապարակ, շուրջը երկյարկանի քարաշէն դեղեցիկ բալկոններով տներ, աղիւսից տներ, քարաշէն եկեղեցի և մի քահանայ: Ուսումնարան չունեն, բայց կայ գրագիտութիւն և աչքաբացութիւն, որովհետեւ Ղուրդուղուլին, որ ունի կուլտուրական շատ հաստատութիւններ Ղուզիգիտանի քիւտակն է (մի 20 քայլի վերայ):

8) Ղուրդուղուլի 325 տ., ամբողջ գաւառակի կառավարչական կենտրոն. այդտեղ է պրիստաւը: Ունի առանց բացառութեան աղիւսից և սրբատաշ քարից տներ մինչև անգամ մի և երկու յարկանի: Կայ շուկայ, ուր համեմատաբար կեանքը եռում է. Ղուրդուղուլիի շուկան ունի 8 մանուֆակտուրի մագաղիններ, 15 մանր ապրանքների, 30 արհեստաւորների խանութներ: Արհեստաւորներն են 1) Դերձակ-8, սապոփնիկ-10, մաշակար-5, բացի սոցանից մնացած արհեստաւորներն են դարբին, նալբանա, ստոլեար, դարգար, քարտաշ, բաննահ, ներկարար և ըն. իրանց աշակերտներով և օրավարձ վարպետներով: Ղուրդուղուլում կան. 1) Պահակներ և պահակատուն, 2) Պետական երկդասեան դպրոց, որ մտադրութիւն ունեն պրոգիմնադիա կամ քաղ. դպրոց դարձնելու, 3) Հիւանդանոց՝ մշտական բժշկով, ֆելդշերով և դեղատնով: Մտադրութիւն կայ մօտ ժամանակներս գիւղական բանկ բաց անելու: Բացի բամբակի և ցորենի արտադրութիւնից, որ բաւականութիւն է տալիս տեղական ազգաբնակիւթեան կարիքներին և նրանց արդիւնաբերութեան գլխաւոր աղբւրները կազմում, Ղուրդուղուլին արտահանում է շրջակայքի համար մեծ քանակութեամբ բոստանի բերքեր (տաքդեղ, կարմիր և սև պօրինջաններ): Ղուրդուղուլին իւր յաջող դերքով ամբողջ գաւառակի մէջ տեղումն է, ուրիշ գիւղերի

առուները գլխին, Արմաւրի քարահանքը մօտիկ, և առողջ կլիմայական պայմանների շնորհիւ առաջ է գնում: Այս գիւղացիք գիտակցաբար ընդառաջ են գնում կառավարչական և մասնաւոր ձեռնարկութիւններին և մէկը միւսի ետեւից բացւում են նոր-նոր հաստատութիւններ և նոր-նոր հորիզոններ: Մտադրութիւն կայ փոստի կայարան և հեռագրատուն բաց անելու:

9) Արմաւրի կամ Թափագիւղը-110 տ. մի թաղն է կազմում Ղուրգուղուլի գիւղի, որի հիւսիսային կողմն էլ գտնւում է: Այն առաւելութիւնները ինչ ասացի վերև յիշուած գիւղերի համար, որոնց սիրան է Ղուրգուղուլին, Թաքաղիքով կամաց-կամաց պահասում է, բայց ուս դարձեալ, ըստ ամենայնի, պատկանում է թէ տեղագրութեամբ և թէ նիստ ու կացով «վերի գիւղերին»: Սա ունի հետեւեալ առաւելութիւնները—չատ բանուկ ջրաղացները, դաշտում, գիւղից ուղիղ արեւմուտք, գտնւում է Արմաւրի ըլուրը, գիւղից $1\frac{1}{2}$ վ. հեռաւորութեան վերայ, ուր բացի հնութիւնից կայ քար, կիր, աւաղ: Բլուրը շրջակայ դաշտից մօտ 1000 ստ. բարձրութիւն կունենայ և վերջաւորութիւնն է հիւսիսում գտնուող հսկայ Արագածից աջ ու ձախ տարածւող բազմաթիւ մանր լեռնաշղթաներից մէկի, որ խոր մտած է մշակուած դաշտերի մէջ: Ճանապարհորդակիցներէս հետ, հեալով հազիւ բարձրացանք սարի գագաթը, որ իսկապէս խորթ ու բորթ, անհաւասար ծայրերով է վերջանում: Այդ ծայրերի մէջերում ինձ ցոյց տուեցին երկու կարմիր քարից մեծ սալեր, ուղղահայեաց դիրքով, որոնց վերայ արձանագրութիւններ էին նշմարւում: Բերդ կոչուած մասը քանդուել է, բայց ոչ ինքն իրան, այլ ընակիչների ձեռքով, որոնք հների կառուցած շինութեան քարերը կրելով՝ զարգարում են իրանց ընակարանները: Հետաքրքիր է այն զանգուածը, որից կազմուած են եղել հին Արմաւրի շինութիւնները, մի բաղադրութիւն հողից, աւաղից և էլի ինչից՝ անյայտ է, բայց քարի նման ամուր է: Սարի գագաթի և ստորոտների քարանձաւների մէջ երեւացած հնութիւնների հետքերից չեն երևում, գոնէ չեն մնացել շէնքերի ճակատներ—Փասագ, ինչպէս Անիի, Դառնի, Վանի և Հայաստանի միւս քաղաքների աւերակների մէջ կան: Պատճառը մենք վերև ասացինք. մարգիկ, շրջակայքի ընակիչները, քանդել տարել են քարերը իրանց գերեզմանները զարդարելու, իրանց ընակարանների շինութեան և պէտքերին գործածելու:

Արմաւրի ըլուրի գագաթից երևում է Նրասիւր, որի արծաթափայլ դիժը լայնանում է նրա յորգութեան ամիսներում: Արմաւրի ոտը տակից, հարաւից ոչ շատ հեռու, նկատվում է ընդարձակ հուն, գետատեղ առանց ճահճուտի, որ յետոյ դառ-

նում է Ղուռու-Արազ* դա երասխի հին դաշտն է եղած։
 Ղուռու-Արազը* Արմաւուրի մօտ աւազոտ և մանր քարերի հետ-
 քեր ունի, առանց ջրի, բայց Արմթլուի և Ղուղիդիտանի մի-
 ջում, առաջին գիւղի մօտից, դառնում է ճահճուտ, ապա,
 շօսէի ճանապարհի համար շինուած կամուրջից ոչ շատ հեռի,
 ընդունելով Սև ջրից փ. Ղարխունի առուն, ընդարձակ հունով,
 որպէս մեծ ճահճուտ՝ միանում երասխին փ. Ղարխունի և Մար-
 դարա գիւղի միջև գանուող քրդաբնակ Մատոկալու գիւղի մօտ։

10) Սարգարապատ-400 տ., ցորենի բերքով է յայտնի. ունի
 եկեղեցի, 2 քահ. պետ. երկդասեան դպրոց. նշանաւոր է Երեանի
 վերջին Հիւսէին խանի, Ժանիքաւոր հողէ պարիսպի մնացորդը։

11) Գէշլու, գաւառակի ամենամեծ գիւղը-500 տ., սա-
 պոն է արտադրում շրջակայքի համար. ունի եկեղեցի 2 քահ.
 և ծխ. դպրոց։

12) Մուրաբայադէտ.-400 տ., քարեայ գեղեցիկ եկեղեցի են
 շինում, կայ ծխ. դպրոց և 2 քահանայ։

13) Շահրիար, հարուստ մեծ գեղ, մօտ-500 տ. 1 քահանայ
 1 պետական երկդասեան դպրոց, որ ուզում են քաղաքական
 դարձնել։

Իբրեւ գաւառակի կենտրոն Շահրիարը մըցում է Ղուռ-
 դուղուլիի հետ և աշխատում գէպի ինքը դրաւել կառավա-
 րութեան հաստատութիւնները։

14) Քեալադեարխ և 15) Զաֆարապատ. այս երկուսի վերա-
 բերութեամբ շատ բան չկայ ասելու. դրանք ստորին գիւղերի
 տեսակին են պատկանում. ունեն մի-մի եկեղեցի և մի-մի քա-
 հանայ, առանց օրինաւոր դպրոցի։

Սարգարապատի գաւառակը աշխարհադրական տեսակե-
 տից, քիչ բացառութեամբ (Սարգարապատի անապատը) ար-
 գաւանդ մշակած գաշտ է ներկայացնում, որ ջրվում է մեծ
 մասով Երասխ գետից հանած առուններով, որոնք երբեմն 18-
 20 վերստ երկարութիւն ունեն (Մարդարի առուն) որ անցնելով
 դանազան գիւղերի միջից, կորցնում են իրանց ջրերից մեծ քա-
 նակութիւնն յօգուտ «վերի» յափշտակիչ և ի վնաս «ցածի»,

*) Ղուռու—Արազ նշանակում է չոր, ցամաքած Արազ, Ղուռու—
 Արազը Երասխի հին հուն է։ Քրիստոնէութեան ա. դարին Երասխը արդէն
 փոխած էր իւր հունը (Նորինացի, զիրք Բ. դ. 1. Թ.)։ Պէտք է ասել, որ
 Երասխը իւր հունը Արարատեան դաշտում շատ անգամ է փոխել. հետ-
 քերը նկատելի են Սարգարապատի գաւառակում եւ Սուրմալուի գաւա-
 ռում։

առուների իրաւատէր, գիւղերի: Յաճի գիւղերից Մարգարան առաջինը պարտաւորուեց 80-ական թուականներին: Երկրորդ առու հանել իւր դաշտերի վերի ծայրում գտնուող Երասխի մի բազկից և սկսեց առատապէս ջրել իւր ցածի դաշտերը: մինչդեռ վերի դաշտերը մնացին վերի կամ Մարգարի առուի հաշուին, որ գալով գիւղի մօտ բոլորովին նուազում է: Մարգարի գիւղի օրինակին հետևեցին էլ ջրկարցիք, վերջերս և Զբըխչեցիք: Գաւառակի արևելեան կողմն ընկած (մեծ մասով թուրք գիւղերը) Սև ջրից են ջուր ստանում: Մարգարապատի դաւառակի ազգաբնակիւթիւնը մեծաւ մասամբ ժիւր է, կռուելով ընտւթեան հետ, շու և բորակային հողերը քաղցրացնում, կաւային հողերը պարարտացնում, ճահճուտները չորացնում և անջրակ տեղերում ջուր հասցնում: Տաժանելի աշխատասիրութեան շնորհիւ Մարգարապատի դաւառակի հայ ժողովուրդը բաւականանում է իւր հողով ու ջրով և հեռու մնալով քաղաքներից, թէև զուրկ է քաղաքավարի և քաղաքակիթ կեանք վարելուց, բայց դրա փոխարէն ազատ է զուտ քաղաքին վերաբերող արատներից: Ընտանեկան կեանքի մաքրութիւնը, հոյրենի սովորութիւնների պահպանութիւնը (եղուի, բարբառի, եկեղաւանդութիւնների) և այլն օրինակելի է: Այդ դաւառակի ազգաբնակիւթիւնը զուրկ է ինտելլեգենտ ոյժերից և շատ անգամ էներգիա են վատնում աւելորդ վէճերով: Կրթութեան մակերևոյթը խիստ ցածր է, անգամ դաւառակի «վերի» բարեկեցիկ մասում, ո՛ւր մնաց «ցածի» գիւղերի: Կրթութեան ստորին չափը արդէն յայտնի եղաւ իւր դպրոցների թուով, այժմ միջնակարգ և բարձր կրթութեան չափը որոշենք: Ազգային և պետ. միջնակարգ ուսումնարաններում սովորում են միջ. ուսումնարաններում

1) Շահրիարցի 5-6 հոգի:

2) Մարգարապատ գիւղից 2-3 հոգի:

3) Մուլա-Բայազցի 4-5:

4) Գէջրուից 7-8:

5) Ղուրդուղուից 15 հ.

Մնացած գիւղերից չկան քաղաքներում ուսանող կամ աշակերտ: Ամբողջ դաւառակում ընդամենայն մօտ 35 հոգի են սովորում միջնակարգ ուսումնարաններում, որ չնչին տոկոս է կազմում մօտ 20,000 հայ ազգաբ. համար:

Արք. Բնյ. Մարգարեանց